



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՅՈՒՆՈՒՆ ԿԻՍՄԱՆՆԵՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԳ.

21 ՓԵՏՐՎԱՐ 1875



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

1875



ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Յարութիւն Գ. Տատեան	պէջ	Ա. ԱՅԵՆԱԳԵՏ
Ռուսինեան	էֆէնտի	Ռ. »
Յակոբ Կոստանդ	»	Գ. »
Ստեփան Փափաղեանց	»	Ա. ԱՅԵՆԱԳԵՏ
Պօղոս Պառնասեան	»	Ռ. »
Համբարձում Ալաճաճեան	»	Գ. »

ՉԵՌՆ ՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Խորէն Եպիսկոպոս Կար-Պէյ		ԱՅԵՆԱԳԵՏ
Տ. Յովհաննէս Բ. Մկրտեան		
Առաքել Ալթուն Տիւրքի	էֆէնտի	

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յակոբ Կոստանդ	էֆէնտի	ԱՅԵՆԱԳԵՏ
Ռուբէն Կիւմրիէրտանեան	»	
Սիմոն Միքայէլեան	»	

ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻԻԱՆ

Գրիստոստուր Դազարոսեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳԵՏ
Յովհաննէս Ազնաւուրեան	»	
Յակոբ Եէմէնիճեան	»	

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տիգրան Եռսուֆեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳԵՏ
Պօղոս Ժամակոչեան	»	
Գէորգ Ստիմարաճեան	»	

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յակոբ Բաղաղեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳԵՏ
Միքայէլ Մամիկոնեան	»	
Համբարձում Ալաճաճեան	»	

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Մատթէոս Վ. Իզմիրլեան		ԱՅԵՆԱԳԵՏ
Տ. Արիստակէս Բ. Մամբրէեան		
Յովսէփ Մաղլամեան	էֆէնտի	

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ռուսինեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳԵՏ
Պօղոս Պառնասեան	»	
Ստեփան Փափաղեանց	»	

ՆՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խաչատուր Միսաքեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳԵՏ
Կարապետ Իւթիւճեան	»	
Յարութիւն Մէրեմ-Գուլի	»	

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԴ.

21 ՓԵՏՐՎԱՐ 1875

ՆԱԽԱԳԱՀ.— ՏԷՐ ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Ասորեայ կարգեալ)  
ԱՏԵՆԱՊԵՏ.— ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՐԵԳԻՆ ՊԷՅ ՏԱՏԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

- 1. Թաղէոս Եպիսկ. Բ.
- 2. Գրիգոր « Բ.
- 3. Խորէն « Կար Պէյ
- 4. Գարեգին Վ. Թաթարեան Բ.
- 5. Մատթէոս « Իզմիրլեանց
- 6. Խորէն « Կիրոյեանց
- 7. Կարապետ « Սերոբեան Բ.
- 8. Ներսէս « Ալանեան Բ.
- 9. Ամբրոսիոս « Իսկէնտերեանց
- 10. Հմայեակ « Դիմաքսեան Բ. 2
- 11. Յովհաննէս « Փափաղեան
- 12. Յովհաննէս Բ. Մկրտեան
- 13. Գէորգ « Արծրունի Բ. Պ
- 14. Գրիգոր « Աճէմեան Բ.
- 15. Խորէն « Փէշիվանեան Բ. 2
- 16. Յարութիւն « Սերոբեան Բ.
- 17. Սիւքիաս « Մայր եկեղեց. Բ.
- 18. Արիստակէս « Մամբրէեան Բ.
- 19.
- 20.

ԱՏԵՆԱՊԵՏ

(Ա. Վիճակ)

Գոռմապիոն, Կիսիկի յիւշաւ և  
Գոռմապիոնի զոռն

- 21. Սենեքերիմ Մանուկեան Բ.
- Բ. Բացակայութիւն առաջին
- Բ. 2 Բացակայութիւն երկրորդ
- Բ. Պ Բացակայութիւն բանաւոր պատճառաւ
- ՀԲ. Հրաժարեալ

- 22. Պօղոս Ժամակոչեան
- 23. Յակոբ Յրէնկեան
- 24. Բարթող Բիւրջճիպաշեան Բ.
- 25. Գէորգ Ստիմարաճեան
- 26. Ն. Ռուսինեան
- 27. Պօղոս Պառնասեան
- 28. Եսայի Անուիեան Բ. 2
- 29. Մանուկ Արապեան Բ. Պ
- 30. Պօղոս ձեւաճեան Բ.
- 31. Բարսեղ Հալաճեան Բ.
- 32. Գրիգոր Պէրպէրեան Բ.
- 33. Պետրոս Քերէստէճեան Բ. Պ
- 34.
- 35.
- 36.
- 37.

(Բ. Վիճակ)

(Բ. Վիճակ)

Պէշիվաջ

- 38. Կարապետ Ս. Իւթիւճեան
- 39. Յարութիւն Մարգարեան
- 40.

ԵՆԿԱՅԻՄ

- 41. Համբարձում Իփէկճեան
- 42. Խաչատուր Դազարոսեան
- 43. Կարապետ Գ. Փափաղեան
- 44.

ԽՈՍԿԻՍԱՐ Ս. ԽՈՍ

- 45. Յովնէփ Ա. Մաղլամեան Բ.
- 46. Սերբէր Պամաճեան Բ.
- 47.
- 48.

- Խոսկիսար Ս. Կարապետ
- 49. Ալեքսան Սարգսեան Բ. Պ
- 50. Միհրան Պաճճեփոլեան Բ.
- 51. Յովհաննէս ձեւաճեան
- 52.

(Գ. Վիճակ)

ԲՆՐԱ

- 53. Գրիգոր Սէլիփէճեան Բ.
- 54. Տելեմաք Մ. Էքսէրճեան Բ.
- 55. Միքայէլ Մամիկոնեան Բ.
- 56. Արիկ Ունճեան
- 57. Ստեփան Խնդիրեան Բ. 2
- 58. Նշան Բաղաղեան Բ.
- 59. Մարտիրոս Յ. Տելէեան Բ.
- 60.
- 61.

ԳՈՐԾՄ ՎԱՅԱ

- 62.

ՄԻՋԱԳԻՈՂ

- 63. Յակոբ Պ. Նորատունկեան
- 64. Յակոբ Կոստանդեան
- 65. Տիգրան Եռսուֆեան
- 66. Կարապետ Պ. Պերեանց
- 67.

ՊԵՏՐՎԱՐ և ԴԱՐԱՄԺԻԱ

- 68. Յարութիւն Մերեմ-Գուլի

(Գ. Վիճակ)

ԶՆԱՊՈՒՆՆԻՍ և ԻՃԱՍԻԿ

- 69. Ստեփան Պէշիվճեան
- 70. Յովհաննէս Էսաեան



Գրառգրիչ	ԳԱՆԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
71. Մկրտիչ Մուրադյան	Կարին
72. Կարապետ Շահպաղյան	Բ. Պ
Կարապետ	Քհոյմախան
73. Յակոբ Եմբեկյան	102. Մեթոք Յ. Այվազյան
Երևանահայկե Մամուլիոյ	Արթուրյան
74. Օրսէն Խոճասրեան	15. Ռուբէն Կիւմրէզկերտանեան
Թովմապետ	Կիւմրէզկերտ
75.	104. Տէրբան Կիւմրէզկերտանեան Բ.
Էջոյ Ս. Եղիս և Ս. Աստուածամիտ	Ալի
76. Գարեգին Յ. Մելիքեան	105. Պետրոս Միսաքեան Բ.
Գորոնդեզի	Հարսիստ
77.	106. Արարիկ
Հասար և Պոյաճի գիւղ	107. Կարապետ Խաչիկեան
78.	Բաղիշ
Կոր գիւղ և Ս. Երեմիա	108. Պրոսպ
79. Ղազար Հովհաննէս Բ.	109. Բրիտանիա Ղազարեան
Պարս	Երանդիս
80. Մկրտիչ Գ. Էսեան	110. Ամասիա
81. Յովհաննէս Կրճիկեան	111. Համբարձում Ալաճաճեան
82.	Բարո
Քարապետի	112. Յովհաննէս Աղնաուրեան
85. Յարութիւն Գ. Տասեան	Եղևիս
84. Յարութիւն Զէնիբեան	115. Մանգրլի
(Ե. Վ. Սիմոն)	114. Հանըն
Մամուլիոյ	115. Երզնիս և Բարեղոյ
85. Աւետիս Քոչարեան	116. Թիքիթապ
86. Նազարէթ Շահպաղյան	147. Տէրբան Գ. Միսաքեան Բ. 2
87. Նշան Օտեան	Կեսարիս
88. Յակոբ Քաղապետ	148. Մատթէոս Մ. Այվազյան Բ. Պ
89. Եղևազար Մելիքեան	Խարբերոյ
90.	Իզմիր
91.	Մարտի
92.	Իզմիր
95.	Երզնիս
94.	119. Յովհաննէս Երզնեան
Խաչատրի	Պարսիստ
95. Առաքել Ալթուն Տիւրք Բ.	120. Յովհաննէս Յովհաննէս Բ.
96. Խաչատր Պ. Միսաքեան	
97. Սարգիս Արապեան	
98. Սիմոն Միքայէլեան	
99. Ռէթէոս Պէլիկեան	
100.	

Մոռ
121. Սահման Պ. Պ. Փափաղեանց
Տիպիկ
122. Պողոս Մովսէսեան Բ.
Զեյթուն և Մարաշ
125.
Տրապիզոն
124. Մկրտիչ Կիւմրէզեան Բ.
Պարս
125.
Տիգրանակերտ
126. Թադէոս Թէրեան Բ.
Վան
127. Սիմոն Մարտիտեան Բ. 2
Աղմամուր
128.
Հալիպ և Այնթապ
129.
Սերաստիս
150.
Ռուսիոյ
154.
Կարս
152. Արաքս Գ. Այվազեան
Զմէլամազ
155. Համբարձում Սարգեղեան Բ.
Գաղատիս
154.
Ատան
155. Սիմոն Պ. Նորասուղեան Բ. 2
Մրդերոյ
156. Մատթէոս Ալեքսանեան
Եօղրատ
157.
Մարտի
158.
Իզմիր
159.
Երզնիս
140.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ժրագիր արգելի ստաց :
2. Կաշտածոց զեռանի Տեղեկագիրն արգելի վաճառելից համարառութեանը վերաբերեալ :
3. Փոխորտի տրամադրութեանը Մանսնադրութեան. — վերաբերեալ Յանսնադրութեանը ծրագիրը :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը անձնական տկարութեան պատճառաւ այսօրեայ նիստէն բացակայ մնալով, ժողովին հրահրանաց համեմատ Տ. Խորէն Ս. Արքեպիսկոպոս առօրեայ Նախագահ Կարգեցաւ, եւ ատենը բացուեցաւ ժամն 7 1/2 ին ի ներկայութեան 40 երեսփոխանաց, որոց վերջին թիւը 48 ի յանգեցաւ :

Ատենապետ պէյ նախընթաց նիստի ատենագրութեան վրայ ի գիտողութիւն հրահրեց երեսփոխանները :

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ինչպէս որ յայտնի է ժողովս Կանոնադրութիւն մը ընդունեց եւ հաստատեց, որպէս զի օրինաւորութեամբ խօսին երեսփոխանները, եւ այսպէս մէկ խնդրոյ վրայ թեր խօսող երեսփոխանի մը ետեւէն դէմ խօսող մը պէտք է : Սակայն անցեալ նիստին ինչպէս կ'երեւի ատենագրութեան մէջ, միեւնոյն խնդրոյ վրայ 3 անգամ խօսեց Նիկիկեան էֆէնտին առանց դէմ խօսող մ'ունենալու. նոյնպէս Շահպաղեան էֆէնտին, Այս գիտողութիւնը չպիտի ընէր եթէ անցեալ նիստին Նիւանը չարգելուր իմ խօսելու իրաւունքս, զի ես ալ քանիցս խօսք ուզած էի եւ չարուեցաւ. ուստի իմ այս գիտողութեանս արձանագրութիւնը կը խնդրեմ :

ԱՏԵՆԱԿԱՆ ՊԵՅ. — Ներկեցէք ինձ ըսել, Արժանապատիւ Հայր, որ ձեր գիտողութիւնը կանոնադրական կէտի մը վրայ է, եւ կարող էք ընել այսպիսի գիտողութիւններ. սակայն ըստ որում հիմա կարգն ատենագրական գիտողութեանց է, պէտք է որ ատենագրութեան վրայ գիտողութիւն եթէ ունիք՝ ընէք, ինչպէս որ Կանոնադրութիւնը կը պահանջէ. իսկ ուրիշ կէտերու վրայ կրնաք գրով բողոքել :

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Արժանապատիւ Հայր, որ ձեր գիտողութիւնը կանոնադրական կէտի մը վրայ է, եւ կարող էք ընել այսպիսի գիտողութիւններ. սակայն ըստ որում հիմա կարգն ատենագրական գիտողութեանց է, պէտք է որ ատենագրութեան վրայ գիտողութիւն եթէ ունիք՝ ընէք, ինչպէս որ Կանոնադրութիւնը կը պահանջէ. իսկ ուրիշ կէտերու վրայ կրնաք գրով բողոքել :

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը անձնական տկարութեան պատճառաւ այսօրեայ նիստէն բացակայ մնալով, ժողովին հրահրանաց համեմատ Տ. Խորէն Ս. Արքեպիսկոպոս առօրեայ Նախագահ Կարգեցաւ, եւ ատենը բացուեցաւ ժամն 7 1/2 ին ի ներկայութեան 40 երեսփոխանաց, որոց վերջին թիւը 48 ի յանգեցաւ :

Ատենապետ պէյ նախընթաց նիստի ատենագրութեան վրայ ի գիտողութիւն հրահրեց երեսփոխանները :

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ինչպէս որ յայտնի է ժողովս Կանոնադրութիւն մը ընդունեց եւ հաստատեց, որպէս զի օրինաւորութեամբ խօսին երեսփոխանները, եւ այսպէս մէկ խնդրոյ վրայ թեր խօսող երեսփոխանի մը ետեւէն դէմ խօսող մը պէտք է : Սակայն անցեալ նիստին ինչպէս կ'երեւի ատենագրութեան մէջ, միեւնոյն խնդրոյ վրայ 3 անգամ խօսեց Նիկիկեան էֆէնտին առանց դէմ խօսող մ'ունենալու. նոյնպէս Շահպաղեան էֆէնտին, Այս գիտողութիւնը չպիտի ընէր եթէ անցեալ նիստին Նիւանը չարգելուր իմ խօսելու իրաւունքս, զի ես ալ քանիցս խօսք ուզած էի եւ չարուեցաւ. ուստի իմ այս գիտողութեանս արձանագրութիւնը կը խնդրեմ :

ԱՏԵՆԱԿԱՆ ՊԵՅ. — Ներկեցէք ինձ ըսել, Արժանապատիւ Հայր, որ ձեր գիտողութիւնը կանոնադրական կէտի մը վրայ է, եւ կարող էք ընել այսպիսի գիտողութիւններ. սակայն ըստ որում հիմա կարգն ատենագրական գիտողութեանց է, պէտք է որ ատենագրութեան վրայ գիտողութիւն եթէ ունիք՝ ընէք, ինչպէս որ Կանոնադրութիւնը կը պահանջէ. իսկ ուրիշ կէտերու վրայ կրնաք գրով բողոքել :



գիտողութիւնները գրաւոր զրկած է Գիւանին . սակայն յետոյ գիւանապետէն տեղեկացայ՝ որ այդ գրաւոր գիտողութիւններն այն ատեն իրեն հասած են՝ երբ ատենագրութիւնը տպագրութեան տակ է եղեր :

ԻՓԷԿՃԵԱՆ Ը. ԷՖ. — Ես նոյն նստին հետեւեալ օրը իրեն զրկեցի :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Գիւանապետն այս քաջատրութիւնն ինձի տուաւ :

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Ատենագրութեան 185 երեսին մէջ Տ. Մատթէոս վարդապետի երկրորդ խօսքը կրկնած էի, որ չէ արձանագրուած :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — 187 երեսին մէջ ձիւնեան էֆէնտին երբ ըսաւ թէ շատ անգամ սնտուկն այնպիսի նեղութեան մէջ կը գտնուի՝ որ չկրնար հատուցանելի պարտքերէն մինչեւ անգամ հարիւր զուրուշ վճարել, ես ընդմիջելով պատասխանեցի թէ՛ կիթէ այդչափ նեղութիւն կայ՝ Պատրիարքարանի խոհանոցը վերցուցէք . այս խօսքս չէ արձանագրուած :

Նոյնպէս՝ Արքայան Պատրիարքին այն խօսքին թէ գիւանապետներուն տալիք ստակ չըկայ, պատասխանեցի թէ այդպիսի յայտարարութիւն մը Պատրիարքարանի պատուոյն կը դաչի . այս խօսքս ալ չէ արձանագրուած :

ԱՏԵՆԱԳՊԵՏ ՊԷՅ. — Ատենը ընդմիջումներ են, եւ չէ թէ խօսք ուղեւոր ըստ կարգին զբողոքուած խօսքեր . անոր համար շատ անգամ չեն ըմբռնուիր եւ արձանագրուիր . բայց հիմա գիտողութեանց կարգին մէջ կրնան արձանագրուիլ : Այս առթիւ ի զէպ կը համարիմ ան գիտողութիւնը մէջ բերել Գիւանին կողմէն, որ շատ լաւ կ'ընեն երեսփոխանք եթէ այսուհետեւ ընդմիջումներ ընելէ կարելի եղածին չափ զգուշանան ըստ Կանոնագրութեան :

ՇԱՀՊԱՋԵԱՆ Ն. ԷՖ. — Երես 179 սիւնակ 27. Հորս երեսփոխանաց կողմանէ ստորագրեալ գրաւոր առաջարկութեան կարգացուելէն ետքը ես ալ խօսք ուղեւոր նոյն երեսփոխանաց կը ձայնակցիմ ըսած էի, որ չէ արձանագրուած :

Երես 186 սիւնակ 1. Ատենագրութիւն էֆէնտինի դէմ ըրած ատենագրութեան վերջը եւ Կանոնագրութեան հակառակ այնպիսի խօսք մը Մ. Գիւանի Ա. Ատենագրութիւնը ըսելուս կը ցաւիմ ըսած էի, եւ այս գիտողութեանս

պատասխան յիշեալ Ատենագրութիւն էֆէնտինի դէմ չեցեւ ըսած էր :

Երես 187 սիւնակ 1. Կանոնական գիտողութիւն ունենալուս համար խօսք առնելէս ետքը սկսած էի Կանոնագրութեան 54 եւ 55-րդ յօդուածները կարդալ . Գիւանի կողմանէ քանի անգամ ընդմիջում եղաւ, բայց ես ալ ամեն անգամուն էս լռեցի : Ես չեմ ուզէր ինչիս ըսելէ ետքը՝ ժողովին մեծամասնութեանը խնդրանաց համեմատ նոյն յօդուածները ամբողջ կարդացի՝ որ պէտք էր արձանագրուիլ :

Ատենագրութեան վրայ ուրիշ գիտողութիւն ընող չըլլալով, քուէի զրուեցաւ եւ ԸՆԴՈՒՆՈՒՅՏԱԻ :

2. ԲՈՅՈՒՆՆԵՐ ԷՔԵՒԵՆՆԵՐ

Ատենապետ էֆէնտին Օրակարգին անցնելէ առաջ ծանոյց ժողովին թէ անձնական տրկարութեան պատճառաւ այսօր ժողովէն բացակայ մնալու ստիպուած են :

Շահապետն . Կարապետ էֆէնտի Քէրէպտէճեան Պետրոս »

3. ԵՐԵՍՖՈՒՆԻՆԻ ԳԻՒԱՆԻՆԵՐ

Գիւանը ծանոյց ժողովին թէ Համարակալութեան գիւանն իրեն ատենապետ ընտրած է Երեսփոխան Տիգրան էֆէնտին :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ա. ՇՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՏՐՈՑ

ԱՏԵՆԱԳՊԵՏ ՊԷՅ. — Տուրքի խնդիրն Օրակարգին դրուին անցեր է անցեալ նստին ժողովին որոշմամբ, բայց պայմանաւ, այսինքն՝ եթէ Համարակալութեան գիւանէն՝ ուր յըղուած է այդ խնդիրը, տեղեկագիրը գայ հասնի այս նիստին : Եւ որովհետեւ սպասուած տեղեկագիրը հասած չէ ցարդ, հետեւապէս այսօր այս խնդրոյն վիճարանութեանը չենք

կրնար ձեռնարկել : Կը մնայ ինձ գիտողութիւն մը միայն ընել այս մասին . ըսի թէ թէսկան կերպիւ անցեր է այս խնդիրն Օրակարգին մէջ . սաի օրինաւորութեան ճամբու մէջ չէ . քանզի երբէք չէ տեսնուած որ խնդիր մը բանի որ ներկայացած է ժողովին իբր վիճարանելի եւ նոյն իսկ ժողովոյն որոշմամբ, Օրակարգին մէջ թէութեամբ անցնի : Ուստի ապագային համար Գիւանին ուշադրութեանը կը յանձնեմ այս կէտը :

Սոյն գիտողութեանէն ետեւ Ատենապետ պէյ կը ծանուցանէ ժողովին թէ տուրքի խնդրոյն առթիւ Լեւոնճեան էֆէնտի ստորագրութեամբ առաջարկութիւն մը եկած է Գիւանին . եւ թէ այս գրաւոր առաջարկութիւնն ալ Համարակալութեան գիւանին պէտք է յանձնել :

Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍ Ք. ՄԿՐԵԱՆ. — Նոյնպիսի առաջարկութիւն մ'ալ Մաղպուղեան էֆէնտի կողմէն եկած է արդէն Վարչութեան Քաղ. ժողովին . եթէ պատշաճ կը համարուի, այս ալ Լեւոնճեան էֆէնտի առաջարկութեան հետ միացուելով յանձնուի երկուքը մէկէն . առաջարկութեան գիւանին :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ. — Կը հարցնեմ Գիւանին, միթէ Լեւոնճեան էֆէնտի երեսփոխան է :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Ո՛չ . երեսփոխան չէ . բայց ըստ կանոնի կրնայ անհատ մը որ եւ է աղերսագիր կամ խնդիր ներկայացնել ժողովին :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ. — Հարցմանս նպատակըն այս էր թէ քանի որ երեսփոխան չէ, աւելի աղէկ կ'ըլլար եթէ Վարչութեան երթար այդ առաջարկութիւնն եւ անկէ ուղղակի դար ժողովոյն . ուստի մի եւ նոյն նպատակաւ կ'առաջարկեմ որ Վարչութեան յղուի :

Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍ Ք. ՄԿՐԵԱՆ. — Կրճիկեան էֆէնտի առաջարկութիւնը կը կրկնեմ :

ԵՆՆՈՒՅՏԵԱՆ Տ. ԷՖ. — Տարակոյս չկայ թէ որ եւ է աղգային մը իրաւունք ունի խընդիր մը ներկայացնել Աղգային ժողովին . բայց սա ալ յայտնի է որ եթէ խնդիրը հանրական է, ուղղակի Աղգային ժողովին գիւանու իրաւունք ունենալին հարկ չեմ տեսնել . այն ինչպէս Կրճիկեան էֆէնտին ըսաւ, Վարչութեան պէտք է դիմէ եւ անոր միջոցաւ ներկայացուի Աղգային ժողովին . եթէ այսպէս չըլլայ՝ մատուցանելի խնդրոց վերջը չգար :

Ուստի ես ալ կ'առաջարկեմ որ այսպիսի խընդիրներ՝ որոնք մասնաւորաց կողմէ կուզան, պէտք է Վարչութեան երթան եւ անոր կողմէ հոս դան :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կանոնագրութեան նայելով մասնաւորներէն եթէ բողոք մ'ըլլայ, կրնայ դալ հոս . իսկ առաջարկութիւն մը պէտք է Վարչութեան կողմէն գայ :

Ատենապետ պէյը քուէի դրաւ եւ ժողովը մէկ քուէի դէմ ՈՐՈՇԵՑ Վարչութեան յղել Լեւոնճեան էֆէնտի խնդրագիրը :

Բ. ԿԱԼՈՒԱԾՈՑ ԻՒԱՆԻ ՏԵՂԵԿՊԻՐՆ ԱԶԳ. ՎԱՆՕՐԷԻ ՀԱՍԱՐԱՌՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ :

Ատենապետ պէյ Օրակարգին երկրորդ խնդրին անցնելով կը հրաւիրէ նախորդ նիստէն խօսք ուղղողներն այս մասին խօսիլ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Խնդրոյն մէջ մտնելէ առաջ հարցում մ'ուճիմ Գիւանին . Անցեալ նստին Սրուանձտեան Գարեգին վարդապետի անունով բողոք մը եկած ըլլալը յայտնուեցաւ, բայց չկարդացուեցաւ . ի՞նչ էր այն բողոքը, դեռ ի՞նչ ըլլալը չիմացանք, միայն ըսուեցաւ թէ Վանօրէից խորհրդոյ տեղեկագիրն կը վերաբերի, պէտք է որ այն ալ կարդացուի եւ իմանանք ի՞նչ ըլլալը :

Ատենագրութիւն էֆէնտին կարգաց յիշեալ աղերսագրոյն համառօտութիւնն, որ ահա տարի :

« Սրուանձտեան Գարեգին վարդապետէն երբեմն փոխ. վանահայր Մշոյ Ս. Կարապետի վանաց :

« Բողոք եւ գիտողութիւնը Վանօրէից խորհրդոյ կողմէ հրատարակուած Համարատուութեան տեղեկագիրն այն կէտերուն վրայ, որոնք Մշոյ վանուց փոխ. վանահայրութեան պաշտօնավարութեանը կը վերաբերին : Տօմարադրեալ թիւ 54. եւ հրամանաւ Արքայան Պատրիարք Հօր Աղգային ժողովոյ Մայր



Գիւանին հաղորդեալ ձեռամբ Գիւանապետին 21  
Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. — Այդ բողոքագիրն  
Ազգային Վարչութեան անցած է մի :

ԿՈՍՏԱՆԴՆԱՆ Յ. ԷՅ. — (Արտ. Գաղ. Ժող. Էջ.)  
— Ո՛չ. անցած չէ :

Ատենապետ Պէյ Կաննապետութեան ԾՕԴ  
յօդուածը կարգապէս ետեւ. Գարեգին վարդապետի  
աղերսագիրը Յարաբերութեան գիւանին  
յղելի խնդիր մ'ըլլալը յայտնելով, պատրաստուեցաւ  
Ժողովին կամայը զիմել թէ արդեօք  
Վարչութեան թէ ոչ Յարաբերութեան գիւանին  
կ'ուզէ յղել :

ԷՍԱԵԱՆ Մ. ԷՅ. — (Արտ. Գաղ. Ժող. Էջ.) —  
Քիչ մ'առաջ հարցում մ'եղաւ թէ այդ բողոքագիրը  
Վարչութեան անցած է թէ ոչ. պէտք է որ հակիրճ  
բացատրութիւն մը տամ այս մասին : Անցեալ  
չարթու Գաղ. Ժողովոյ նիստին Գիւանապետ  
Թովմաս էֆէնտին ներկայացնելով այդ բողոքագիրը  
եւ յայտնելով թէ Ազգային Ժողովոյ Մայր  
գիւանին պիտի հաղորդէ, հարցուց թէ ըսելիք  
մ'ունի Գաղ. Ժողովը : Մեք տեսնելով թէ մեզի ուղղեալ  
չէ նոյն բողոքագիրը, չուզեցինք նկատողութեան  
առնուլ : Ըսել կ'ուզեմ թէ խնդիրը Գաղաքական  
Ժողովէն անցած չէ, որովհետեւ անոր ուղղեալ  
չէր :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. — Խօսք կ'ուզեմ պատասխան  
մ'ունիմ այս մասին . . .

Ատենապետ Պէյ չթողուց շարունակել, եւ յիշեցնելով  
վերստին թէ ըստ Կաննապետութեան Յարաբերութեան  
գիւանին պէտք է յղուի առանց վէճի, քուէի  
գրաւ, եւ Ժողովը միաձայնութեամբ ՈՐՈՇԵՑ  
Գարեգին վարդապետի աղերսագիրը  
Յարաբերութեան գիւանին յղել :

Յետոյ Ատենապետ պէյ Կալուածոց գիւանին  
տեղեկագիրն վրայ վիճարանութեան կարգն  
եկած ըլլալը յայտարարելով, այս մասին նախորդ  
նիստէն խօսք ուղղները վերըստին հրաւիրեց  
կարգաւ խօսիլ, եւ խօսից կարգի տուածը  
քննելէ ետեւ յաւելցուց թէ առաջին խօսքը  
Տ. Խորէն վարդապետին է :

Տ. ԽՈՐԷՆ Վ. ԿԻՐՈՅԵԱՆ. — Ես այսօր կը  
հրաժարիմ խօսելէ այդ մասին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Երկրորդ խօսքն  
Իֆէկճեան էֆէնտինն է. բայց պէտք է որ խօսք

առնելէ առաջ իմաց տայ թէ տեղեկագիրն  
ի նպատակով թէ ոչ ընդդէմ պիտի խօսի :

ԻՓԷԿՃԵԱՆ Ն. ԷՅ. — Կէտէր կան որոց  
դէմ եմ եւ հարկաւ դէմ պիտի խօսիմ. կէտեր  
ալ կան որոց կրնամ ի նպատակով խօսիլ, վերջուպէս  
մասնաւոր խնդիր մը չէ, եւ անկարելի է ըսել  
ամբողջ տեղեկագիր մը համար թէ միայն  
թեր կամ դէմ պիտի խօսիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Պէտք է դիտուել թէ  
ատենաբանք ըստ Կաննապետութեան կը նպատակ  
առնին նշանակել տալ Գիւանին թեր կամ  
դէմ խօսելիքնին : Թէ որ ատենաբանք չկրնայ  
մասնաւոր կերպով թեր կամ դէմ ըլլալը որոշել,  
այն ատեն ըստ սովորութեան Գիւանին  
դատողութեանը կը մնայ, յետ ատենաբանութեան,  
որոշել այս կէտը :

ԻՓԷԿՃԵԱՆ Ն. ԷՅ. — Այդ իրաւացի է  
մասնաւոր խնդրոց համար. իսկ երբ տեղեկագիր  
մը կը ներկայանայ մեզ, այն ատեն դժուարին է  
որոշել թեր կամ դէմ խօսելիքնին : Ասկէ զատ  
ես ինչպէս որ անցեալ նստին այս տեղեկագիրն  
վրայ խօսելու իրաւունք չունենալս յայտնելով  
չուզեցի խօսիլ, նոյնպէս այսօր ալ կ'ըսեմ  
թէ իրաւունք չունիմ խօսիլ եւ չպիտի խօսիմ.  
պատճառն ըսեմ. վասն զի այն տեղեկագիրն  
դէմ, որու վրայ պիտի խօսինք, բողոք կայ  
արդէն. եւ այդ բողոքն այսօր որոշուեցաւ  
յղել Յարաբերութեան գիւանին. ուստի  
նոյն տեղեկագիրն այսօրու ընէ վիճարանութեան  
դէմ իրաւունք չէ. Կաննապետութեան  
մը յօդուածին ուժովն որ բողոքագիրը նախաքննելի  
գիւանին յղուեցաւ, միեւնոյն տրամադրութեան  
համաձայն պէտք է տեղեկագիրն ալ յղել  
նոյն գիւանին. վասն զի այս կերպով  
թերեւս նոր ուղղութիւն մը պիտի առնու  
վիճարանութիւնը. հետեւապէս այսօր կարելի  
չէ եւ իրաւունք չունինք այս խնդրոյն վրայ  
խօսիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Երբ կարեւոր խնդիր  
մը, ինչպէս է Վանօրէից խորհրդոյ համարա-  
տուութիւնը, Ազգային Ժողովոյ օրակարգն անցած է,  
բողոքարկուք ընդհանրապէս պարտաւոր են  
կանուխէն տալ իրենց բողոքը. քանզի եթէ  
այդպէս չըլլայ քանի որ խնդրոյն վիճարանութեան  
ձեռնարկուած է, եւ կենսական խնդրոյ  
մը, Ժողովն ու գիւանը դժուարութեան մէջ  
կ'ընան. Ամեն ատեն եկած բողոքագրերու  
համար պիտի սպասեն որ Գիւան

նէն բողոքագրոյն պատասխանը գայ, հետեւաբար  
վիճարանութիւնը պիտի դադրի : Կարելի է անոր  
ետեւն ուրիշ բողոք մ'ալ գայ, դարձեալ սպասոււմ,  
եւ այս կերպով յաւանանկան երկարաձգում  
պիտի ըլլայ : Արդարեւ պէտք է որ Գիւանն  
առօրին եկած թուղթերը ներկայացնէր  
որպէս զի յապագման առիթ մը չգոյանայ.  
սակայն երբ կը տեսնեմ որ հիմա օրակարգին  
ձեռք զարնուած է եւ վիճարանութիւն  
պիտի ըլլայ, դժուար կըլլայ սպասել եւ խնդիրը  
յետաձգել :

ՄԱՂԼԸՄԵԱՆ Յ. ԷՅ. — Բողոքագիր մը եկած է  
որ մասնաւոր վանքի մը հաշիւներու խնդրոյն  
կը վերաբերի. միթէ կարելի չէ այդ կէտն  
ի բաց առնլով մնացած մասը վիճարանութեան  
եթարկել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Խօսից կարգը փափազեան  
էֆէնտինն է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Մեզ զբաղեցնող խնդիրը  
Կալուածոց գիւանի տեղեկագիրն է. որոյ ի նպատակով  
խօսիմ, Կալուածոց գիւանն իրեն յանձնարարուած  
Վանօրէից խորհրդոյ համարա-  
տուութեան տեղեկագիրը քնններ եւ իւր կողմէ  
տեղեկագիր մը բերեր է մէկ եզրակացութեամբ  
եւ երկու թառջարկութեամբ. ասոր մէջ Մշոյ  
բառն անգամ չկայ բարեբաղդաբար . . .

ԻՓԷԿՃԵԱՆ Ն. ԷՅ. — Եթէ պիտի խօսուի  
խնդրոյն վրայ, առաջին խօսքն ես առած եմ,  
եւ ես պիտի խօսիմ. սակայն Ժողովը գեոչորոշեց  
խնդրոյն վիճարանութեանը մասնել, ինչո՞ւ  
Գիւանն այսպիսի ամենապարզ խնդիր մը  
կը քաշքշէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Մի յարձակիք այդպիսի  
բարկութեամբ կ'ազաւեմ Գիւանին վրայ, որով  
զիս պարտաւորէք զձեզ ի կարգ կոչելու Գիւանն  
ինչո՞ւ համար խնդիրները պիտի քաշքշէ.  
Նախ գործին վիճակը հասկընանք, ես նախորդ  
նիստերուն ներկայ չէի, հարցուցի եւ ըսին  
ինձ թէ նախորդ նիստէն որոշուած է Կալուածոց  
գիւանի տեղեկագրոյն վիճարանութեանը  
մասնալ :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Ն. ԷՅ. — (Արտ. Մ. Գիւանն)  
Այո, որոշուած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Ուստի եւ ես նախորդ  
նիստէն սոյն վիճարանութեան համար խօսք  
ուղղներուն հրաւեր կարգացի. եւ որովհետեւ  
դուք, Իֆէկճեան էֆէնտին, չուզեցիք խօսիլ,

հետեւապէս ուրիշներուն խօսք տալ ստիպուեցայ :

(Այս Գիւանն շընչ մ'ելու է որ չէր տեսնէր  
Երեմիայի անց մեզ) :

ԵՆԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ. — Խօսք կ'ուզեմ Եփէկճեան  
էֆէնտինի դիտողութեան վրայ : Եփէկճեան  
էֆէնտին կը գիտէ որ Վանօրէից համարա-  
տուութեան վերաբերեալ տեղեկագրին վիճարանութիւնն  
ինչ պատճառաւ որ անցեալ նիստին ես  
մնաց, միեւնոյն պատճառաւ այսօր ալ  
ես մնայ. սակայն կարծիք մ'է որ խնդրոյն  
բովանդակութեան հետ յարաբերութիւն  
չունի. խնդիրը պարզ կէտի մը վրայ է.  
բողոքագիր մը եկած է Վանօրէից խորհրդոյ  
տեղեկագրին դէմ, զոր Ժողովը Յարաբերութեան  
գիւանին յղել որոշեց, եւ մինչեւ որ նոյն  
գիւանէն պատասխանը գայ, տեղեկագրին  
վիճարանութիւնը կրնայ մի ետ մնալ.  
Ահաւասիկ հոս կը կայանայ Իֆէկճեան էֆէնտինի  
դիտողութիւնը : Ինձ ալ կը թուի թէ լաւ կ'ըլլայ  
որ Ժողովը Իֆէկճեան էֆէնտինի սոյն  
դիտողութեան ընդունելի ըլլալը կամ չըլլալը  
բացարձակապէս իւր քուէովն որոշէ, եւ երբ  
նորա կարծեաց աննպատակ որոշում մը  
տայ, այնուհետեւ բուն խնդրոյն վիճարանութեանը  
սկսուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Բայց արդէն ես այդ  
կէտը մեկնեցի, այսինքն թէ որ օրակարգի  
մէջ անցած խնդրոյ մը վրայ Ժողովը վիճարանութեան  
բացուիլն որոշէ եւ նոյն միջոցին հետզհետէ  
եկած բողոքագիր եւ հանրագիրներու եւ  
կամ խնդրոյն վերաբերեալ ուրիշ թղթերու  
համար վիճարանութիւնը դադրի եւ շարունակ  
գիւաններուն պատասխանին սպասել հարկ  
ըլլայ, երբէք խնդիր մը չլուծուիր :

ԵՆԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ. — Բայց ձեր տուած  
մեկնութեան ինչպէս Իֆէկճեան էֆէնտին,  
նոյնպէս մեք ալ չհասկցանք թէ արդեօք  
Ժողովն ընդունեց թէ ոչ մերժեց նորա  
առաջարկութիւնը, որ միջանկեալ իրողութիւն  
մ'է :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Ժողովն այդ  
մասին նախորդ նիստով իւր որոշումը  
տուած է, որ ահաւասիկ. (Եւ ինչ խորոյ  
նիստէն 188 էրեմիայի անց մեզ) :

Ատենապետ էֆէնտին քուէի գրաւ, եւ  
Գիւանին անգամոց ձեռնպահութեամբ  
Ժողովն Ծ ձայնի դէմ 12 ձայնով  
ՈՐՈՇԵՑ ըստ ա-



ուսմանը և աշխատանքի մեծանունը և անհատական կյանքը նախադասել Վերաբնիչ Յանձնաժողովոյ ծրարագրէն ։

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Ըստ որում անցեալ նիստին Կանոնադրութեան պահանջած պաշտօնական ձեւերը կատարուած չլլալուն համար էր որ Գարեգին վարդապետի բողոքագրին ներկայացումն ետ մնաց, եւ այսօր լրացած են այդ ձեւերը, ուստի հիմա քանի որ ուրոշուած է նոյն բողոքագիրը Յարաբերութեան գիււանին յղել, եւ քանի որ հաւանական է թէ յիշեալ գիււանին կողմէ Վանօրէից Խորհրդոյ համարատուութեան նկատմամբ դիտողութիւններ պիտի գան այդ բողոքագրոյն առթիւ, պէտք է որ ժողովն որոշէ թէ արդեօք կուզէ որ առանց Յարաբերութեան գիււանէն նոյն բողոքագրին վերադառնալուն սպասելու Կալուածոց գիււանին տեղեկագրոյն վրայ վիճարանութիւն ըլլայ : Ահա այս է կարծեմ, Ինչկեան էֆէնտիի դիտողութեան առարկայ եղող կէտը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Շահագործան էֆէնտին ըսել կ'ուզէ թէ քանի որ Գարեգին վարդապետի գիրն այսօր կրցաւ օրինաւորապէս ներկայանալ եւ Յարաբերութեան գիււանին յղուելու որոշումն առնուլ, պէտք է հարցուի ժողովին թէ նոյն գիււանէն գալիք պատասխանին պիտի սպասուի թէ ոչ՝ Կալուածոց գիււանին տեղեկագրոյն վիճարանութիւնը պիտի շարունակուի : Եթէ ճիշդ այս է առաջարկուածը, շատ լաւ : Գիււանն իրեն պարտք կը համարի այդ հարցումն ընել ժողովին : Սակայն ժողովին գործոց դիտողութեան համար պահ մ'առաջ ըրած դիտողութիւնս նորէն կրկնելով կ'ըսեմ թէ պէտք չէր Օրակարգին մէջ գտնուած խնդրոյ մը վրայ բողոք ունեցող մէկն իւր բողոքագիրն այսչափ օրաձգէր, եւ Գիււանին ալ պարտքն էր փութալ ձեռք բերել նոյն բողոքագիրն եւ առ օրին ներկայացնել ժողովին : Ինչ որ է, որովհետեւ վերջին քանի մը նիստերուն չկըցի ներկայ գտնուիլ, եթէ ո՛ր եւ իցէ կողմէ պակասութիւն մ'ալ եղած է, այդ պակասութիւնն ես յօժարութեամբ իմ վրայ կ'առնում, որպէս զի ժողովը փուճ տեղը միջանկեալ դէպքերու վրայ ժամաւաճառ չըլլի եւ հետեւաբար կարեւոր խնդիրներու լուսարանութիւնը ետ չըձգուի :

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Բայց ներքեցէ Ատենապետ էֆէնտի, ձեր մէկ սխալն ուղղել

բողոքարկուն ժամանակին տուած է իւր բողոքագիրը, սակայն Գիււանը չէ ներկայացուցած զայն իւր ժամանակին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Այդպէս չէ. Նախագահ Սրբազանն անցեալ նիստին բացատրեց այդ կէտը, եւ ըսաւ թէ Գարեգին վարդապետի գիրը ինք չէր բերած եւ Պատրիարքարանը մընացած էր, եւ նոյն օրը հոս եկածը յուշարար գիր մ'էր, առանց տոմարագրուած ըլլալու : Ուրեմն Գիււանը չէ զայն ներկայացնողը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Կ'աղաչեմ, այդ կէտին վրայ ժամանակ չկորսնցնենք : Արդէն ըսեր եմ որ եթէ յանցանք մը կայ՝ ես իմ վրայ կ'առնում դէպքին մէջտեղէն վերնալուն եւ գործին ետ չմնալուն համար :

Տ. ԱՄԲԻՐՈՍԻՈՍ Վ.— (Կանոնադրութեան 337-րդ և 338-րդ կէտեր) Արդեօք այս յողուածը չկրնանք լուսարանել եւ խնդրոյ նիւթ եղող կնճիռը լուծել. որովհետեւ օրակարգ մը կայ արդէն եւ այսօր զայն ետ ձգելու խօսքեր կ'ըլլան :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Ո՛չ. միջանկեալ իրօղութեան մը վրայ է խնդիրը, ինչպէս իրաւացի կերպով ըսաւ Եռսուֆեան էֆէնտի. որովհետեւ Գարեգին վարդապետի գիրը ժամանակին չէ ներկայացուած ժողովին, եւ որովհետեւ այսօր կը յղուի նոյն գիրը Յարաբերութեան գիււանին, անոր դարձին սպասելու կէտին վրայ ժողովին կամքը հարցուելու առաջարկութիւն կ'ըլլայ. պէտք է որ այս կէտին համար ժողովին կամացը գիմեմ, միանգամայն վերի ըրած դիտողութիւններս ժողովին մասնաւոր նկատողութեան ներքեւը դնելով :


ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Ժողովին կամացը դիմելէ առաջ խօսք կ'ուզեմ բողոքագրի մասին բացատրութիւն ստալու համար : Միջանկեալ դէպք մը պատահեցաւ կ'ըսեն, բայց այդ դէպքը պէտք է մեծ կարեւորութիւն ունենայ, որպէս զի կարող ըլլայ սկսուած գործ մը ետ ձգելու : Ի՞նչ է միջանկեալ դէպքը. Գարեգին վարդապետ բողոքագիր մ'ունի Վանօրէից Խորհրդոյ տեղեկագրին դէմ Մշոյ վանուց հաշիւներուն վրայօք, բայց միթէ Կալուածոց գիււանին տեղեկագրոյն մէջ Մշոյ վանքին վերաբերեալ խօսք մը կամ բառ մը կայ. ամենեւին ոչ. հետեւաբար անպատեհ է այսօր այդ տեղեկագրին վիճարանութիւնն ետ ձգելու : Անցեալ նիստին այդ բողոքագրին վրայ բաւական խօսք

ուեցաւ եւ ժողովը վերահասու եղաւ թէ Գարեգին վարդապետ իր մասին կը բողոքէ Վանօրէից Խորհրդոյ համարառութեանը դէմ. ստի գիտնալով հանդերձ Յ ձայնի դէմ 12 ձայնով Կալուածոց գիււանի տեղեկագրին վիճարանութիւնը նախադասեց օրակարգին մէջ, եւ իւր այս որոշումը խոշոր գրերով արձանագրուած է ատենագրութեան մէջ : Հիմա եթէ այս որոշումը չգործադրէ ժողովը, իւր իմաստութեանը դէմ վարժուած եւ իւր արժանապատուութիւնը վիրաւորած կ'ըլլայ. ուստի կը զգուշացնեմ ժողովն իւր պատուոյն դէմ վարուելէն. այսչափ էր իմ ըսելիքս. ժողովոյն կը մնայ իւր ընելիքն որոշել :

Ինչկեան Ն. էֆէնտի խօսք ուղեց Խօճասարեան էֆէնտիին պատասխանելու համար. սակայն Ատենապետ պէյ Կանոնադրութեան 277-րդ ուսածը կարգալէ ետեւ յիշեցնելով Ինչկեան էֆէնտիին թէ ալ պատասխանելու տեղի մնացած չէ, յայտարարեց թէ Գարեգին վարդապետի գրոյն պատասխանը Յարաբերութեան գիււանէն սպասելու կէտին համար եղած առաջարկութիւնը քուէի պիտի դնէ :

Չայս ըսելով Ատենապետ պէյ քուէի դրաւ, եւ ժողովը 17 ձայնի դէմ 21 ձայնով ՈՐՈՇԵՑ Գարեգին վարդապետի աղերսագրին պատասխանը Յարաբերութեան գիււանէն գալէ ետեւ Կալուածոց գիււանի տեղեկագրին վիճարանութեանն անցնիլ :

Այս միջոցին ատեանը քառորդ մը դադար առաւ, եւ յետոյ վերստին բացուելով շարունակեց :



Գ.

ՓՈՓՈԽԵԼԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ. — ՎԵՐԱՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԱՅ ԾՐԱԳԻՐԸ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Օրակարգն է Սահմանադրութեան Վերաբնիչ յանձնաժողովոյ ծրարագիրը : Խօսքը Տ. Մատթէոս վարդապետին է : Տ. ՄԱՏԹԵՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Վերաբնիչ յանձնաժողովոյ կողմէ խօսք խնդրեցի. կը

յայտնեմ որ յանձնաժողովն ասկէ առաջ իւր կողմէ տեղեկարբեր նշանակած էր թէ եւ իւր ատենագրին՝ որ է Այվատեան Մատթէոս էֆէնտին. սակայն Մատթէոս էֆ. ներկայ չէ եւ չպիտի կրնայ շարունակել իւր պաշտօնը. հետեւապէս սն նախկը զրկած է ինձ :

Ատենապետ պէյը խնդրեց որ այդ նամակը յանձնէ Գիււանին, եւ կարգացուեցաւ. ահաւասիկ պատճէնը :

Բերա 16 Փետր. 1875

Արժանապատու Տ. Մատթէոս վարդապետ Իզմիրեան, Նախագահ Վերաբնիչ յանձնաժողովոյ ազգային Սահմանադրութեան :

Ազգային Սահմանադրութեան 297-րդ ուսածին համեմատ, Ինչկեան էֆէնտիի հարցադրութեանը եւ Ազգային ժողովոյ կողմէն Վերաբնիչ յանձնաժողովոյ ձեռք առնուած, ուստի եւ հետեւապէս իբր Ազգային ժողովոյ բերնէն Ինչկեան էֆէնտիի ու վաւերացման համար Ազգային ժողովոյ ներխոյնը՝ Ինչկեան էֆէնտիի ծրագրին՝ բնական անուամբ ՓՈՓՈԽԵԼԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ կոչուած առաջարկութիւնը, Ազգային ժողովոյ մէջ վաստարանելու եւ ըլլալիք առարկութեանց դէմ պաշտպանելու մասին, Յանձնաժողովոյ կողմէն ունեցած տեղեկարբերութեան պաշտօնս, ըսել կուզեմ, Ազգային ժողովոյ Կանոնադրութեան 267 եւ 687 յողուածոց արամադրութեան համեմատ վարուելու իրաւունքս, ուրիշ յանձնելու պարտաւորութեան մէջ գտնուելով, ըստ համահաճութեան Յանձնաժողովոյ անդամոց մեծազոյն մասին, իմ սոյն պաշտօնս կը յանձնեմ Մեծապատիւ Օգսէն էֆէնտի Խօճասարեանին, եւ ի բացակայութեան նորին՝ Չեր Արժանապատուութեան, եւ կը խնդրեմ, որ իմ այս յանձնումս յառաջիկայ նիստին մէջ հաղորդել բարեհաճիք Ազգային ժողովոյ վսեմաշուք Ատենապետին :

Մնամ Չերք Արժանապատուութեան անձնուէր ծառայ Արեւ-դար վեր-մննչ-յան-մարտի-ն Ադ. Սահմանադրութեան ՄԱՏԹԵՈՍ. Մ. ԱՅՎԱՏԵԱՆ



ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Վերաքննիչ յանձնաժողովոյ անդամոց որոշմամբն ուրեմն տեղեկաբեր պիտի ճանչնանք Օգոսէն էֆէնտին : Խօսքը Խփէկճեան էֆէնտինն է Վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագրին բովանդակութեանը վրայ :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Յանձնաժողովոյ ծրագրին վրայ խօսելէս առաջ դիտողութիւն մը ունիմ Այվատեան էֆէնտինն հաղորդուած նամակին վրայ , կարծեմ նա հրաժարած է երեսփոխանութենէն , եւ եթէ ինք կը հրաժարի նաեւ Յանձնաժողովին տեղեկաբերութենէն , իրեն չիյնար ուրիշ մը ցուցնել իրեն տեղն , այլ Յանձնաժողովին կը պատկանի մէկ ուրիշն ընտրել եւ պաշտօնապէս հաղորդել ժողովին :

ԻԽԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ես ալ կը ձայնակցիմ Խփէկճեան էֆէնտինի . վասն զի նոր Տեղեկաբերի ընտրութիւնը Յանձնաժողովոյ անդամոց կը վերաբերի եւ ոչ հրաժարեալ տեղեկաբերին :

Ղաղարտեան Ք. եւ Էքսէրճեան Տ. եւ այլք յանդամոց Վերաքննիչ յանձնաժողովոյն յայտարարեցին թէ իրենց հաճութեամբ Օգոսէն էֆէնտինն յանձնուած է տեղեկաբերի պաշտօնը , ինչպէս Այվատեան էֆէնտին իր նամակին մէջ նշանակած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ. — Իրաւացի է թէ եւ Խփէկճեան էֆէնտինի դիտողութիւնն այդ մասին . սակայն քանի որ Յանձնաժողովոյ նախագահ Հայր սուրբը եւ անդամք հոս պաշտօնապէս կը յայտարարեն թէ Օգոսէն էֆէնտինն տեղեկաբեր ընտրուելը յանձնաժողովոյ անդամոց հաճութեամբն է , պէտք է ընդունինք զայն : Արդ՝ Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրագրին բովանդակութեանը վրայ խօսքն Խփէկճեան էֆէնտինն է , որ ծրագրին ընդդէմ խօսք առած է :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Երեսփոխան էֆէնտիններն արդէն Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրագրին ընթերցած ըլլալով վերահասու եղած են որ Յանձնաժողովը Սահմանադրութեան վերաքննութիւնը կատարելով մեծ փոփոխութիւններ ընելու կարօտութիւն չէ տեսած , այլ բաւական համարած է Վարչութեան Տեսուչ խորհուրդներն ու Հոգաբարձութիւններն միացնելով ներքին գործոց Տեսուչ ժողով մը կազմել , միւս փոփոխութիւններն այնպիսի բա-

նէր են , որ մասամբ լուրջ հոս ընդունուած են , եւ մէկ երկուք ալ կան որ կարեւորութիւն չունին . իսկ ամենէն էական մասն այն է , զոր արդէն ըսի , այսինքն՝ Հայոց ազգին վարչական ներքին գործոց բարեօք անօրէնութեանը համար կարեւոր դատած է Վարչութեան Տեսուչներն երեք Տեսուչ խորհուրդներն ու մէկ Հոգաբարձութիւնը միացնել , եւ Տեսուչ անունով նոր ժողով մը կազմել : Յանձնաժողովը թէ եւ կ'ըսէ թէ այս նոր ժողովը Բ. Գրնէն վաւերացած չը պիտի ըլլայ , սակայն իւր տեղեկագրին մէջ դրած սրբազրեալ Սահմանադրութեան օրինակին ամբողջ խմբագրութեան մէջ կը տեսնենք որ այդ ներքին գործոց Տեսուչ ժողով ըսուածն ալ շարունակ Բ. Գրան հետ յարաբերութեան մէջ կը գնէ , թէ եւ անկէ վաւերացած չը պիտի ըլլայ կ'ըսէ . ասիկա խոշոր հակասութիւն մըն է . երբ Բ. Գրնէն չը վաւերանար , ի հարկէ անոր հետ յարաբերութիւն ալ չը կրնար ունենալ . ասի ձեռքն վերաբերեալ մասն է . իսկ էական մասին գալով կը տեսնենք որ չորս պաշտօնական մարմին իրարու հետ միացուցեր է , որպէս թէ ասոնց միանալովն աւելի շուտով եւ յաջողութեամբ առաջ պիտի երթան Ազգին գործերը . բայց թուաբանական ճշդութեամբ ասոր հակառակը պիտի գտնենք : Յայտնի է որ մեր Ազգ. Վարչութեան մէջ վարձատրեալ պաշտօնէութիւններ չունինք . արդի վիճակին մէջ այդ չորս պաշտօնական մարմինները շաբաթը մէկ օր ուրոյն ուրոյն նիստ կ'ընեն , որով մէկ շաբաթը չորս նիստ ըսել կ'ըլլայ . եթէ անոնք միանան՝ ըստ սովորութեան շաբաթը մէկ անգամ միայն նիստ պիտի ընեն . հարկաւ մէկ շաբաթին մէջ այնքան գործ պիտի կրնան տեսնել որչափ կարելի է մէկ նիստով գործել . մինչդեռ հիմա այդ խորհուրդներն ուրոյն ուրոյն կը գործեն եւ մէկ շաբաթը չորս նիստ կ'ընեն : Յանձնաժողովն այս միակ դարմանը կարծեր է գտնել ազգային գործոց բարեօք կարգադրութեան եւ յառաջադիմութեան համար : Եւ կ'ըսէ թէ ուրիշ փոփոխութեան կարօտ կէտեր ալ կային , բայց չուզեցինք ուրիշ փոփոխութիւններ ընել , ինչո՞ւ . վասն զի կ'ըսէ , Բ. Գրնէն վաւերացման պէտք պիտի ունենային , եւ այս կէտը կրնար դժուարանալ . եւ որովհետեւ կը կարծէ թէ իւր առաջարկած

նոր Տեսուչ ժողովը Բ. Գրնէն վաւերացման պէտք չը պիտի ունենայ , ասով Սահմանադրութեան վերաքննութեան կէտը դիւրացուցած կը համարի , մինչդեռ ինչպէս քիչ մ'առաջ ըսի այդ ժողովը Բ. Գրնէն չը պիտի վաւերանայ ըսելով հանդերձ իւր սրբազրեալ Սահմանադրութեան օրինակին զանազան տեղերը Բ. Գրան հետ յարաբերութեան մէջ կը գնէ :

Այժմ պիտի դամ մասնաւորութեանց վերայ շարունակել իմ դիտողութիւններս : Յանձնաժողովոյ տեղեկագրին ՅԳ. էջին մէջ նախորդ Պատրիարք Խրիմեան Սրբազանին դիտողութիւնները կը տեսնուին , որոնց Յանձնաժողովը կարեւորութիւն չէ տուած եւ ստիպողականութիւնը ժխտած է . իսկ Խրիմեան սրբազան ընդհակառակն իւր դիտողութեանց ստիպողականութեանը վրայ սնդած եւ խնդրած է որ ասոնց ուրիշ կէտերու վերաքննութեանն սպասելու իւր առաջարկած փոփոխութիւններն անյապաղ ներկայացուին Ազգային ժողովոյն . սակայն Յանձնաժողովն ինչպէս դիտէք , չներկայացուց , մինչեւ որ յետոյ Ազգային ժողովն ինք Խրիմեան Սրբազանին առաջարկութեանց կարեւորութիւնը ճանչցաւ եւ որոշեց որ անմիջապէս նկատողութեան առնուին ժողովին մէջ , Խրիմեան սրբազանի առաջարկած փոփոխութիւնը Յանձնաժողովոյ բերած ծրագրին ճիշդ հակոսնեայն է . Նորին Սրբազանութիւնը կ'ըսէ թէ մեր ժողովներն անբաւական եւ սակաւթիւ են , պէտք է յաւելցնել . իսկ Յանձնաժողովն շարդէն եղածներն բաւականէն աւելի գտնելով՝ քանի մը հատը կը վերցնէ եւ չորսին տեղ մէկ ժողով մը կ'առաջարկէ , որով չորս պաշտօնէութեան գործերը մէկի մը վրայ կը բերէ կը կուտակէ . ասոր կ'ըսեն իրաւաբանութեան մէջ Կոստանտնուպոլիս , որ շատ գէշ ճանչցուած է արդէն յառաջագէմ ազգաց մէջ . որովհետեւ հասկցուած է որ ամեն պաշտօն տեսակ մը ընդունակութիւն կը պահանջէ , եւ մէկ մարդու կամ ժողովի զանազան պաշտօն մէկէն չը յարմարի : Իսկ Խրիմեան սրբազանի առաջարկութիւնն ոչ միայն ժամանակին պահանջմանց համաձայն , այլ եւ գործնական ու օգտակար է . որովհետեւ ամենքս ալ զիտենք եւ կ'զգանք որ , մեր ազգային գործերն ինչպէս որ պարտն է չենք կրնար տեսնել . պատճառը սն է թէ մեր ժողովականները չեն կրնար շաբաթը

մէկ անգամէն աւելի զոհողութիւն ընել , եւ այսքանն ալ արդէն բաւական ծառայութիւն մ'է . քանի որ մենք վարձեալ պաշտօնէութիւն չունինք եւ չենք կրնար ունենալ , ինչ պէտք է ընել . հարկաւ մեր ժողովոց թիւը պէտք է շատցնել . այսպէս ընել ստիպուած ենք՝ քանի որ ամսականով պաշտօնեաներ չենք կրնար ունենալ , եւ այն վիճակին մէջ ենք՝ ուր մեր ազգային պաշտօնական մարմինները ձրիաբար ունենալիս թեմալ իրենց յանձնուած պաշտօնները կատարել պարտաւոր են : Ուստի փոխանակ մէկ ազգայինէ մը պահանջելու որ շաբաթը քանի մը օր զոհէ , զո՞նք ըլլանք որ օր մը միայն զոհէ եւ խղճի մտօք կատարէ իրեն յանձնուած պաշտօնը : Այս վիճակին մէջ ստիպուած ենք Խրիմեան սրբազանի առաջարկութեան լաւուշադրութիւն ընծայել . չբարդենք չկուտակենք զանազան տեսակ գործերը մէկ մարմնոյ մը վրայ . . .

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Խնդրեմ , բացատրեցէք եւ ցուցէք տեղեկագրին այն կտորը՝ յորում Յանձնաժողովն ինչպէս կ'ըսէք , կարեւորութիւն չէ տուած Խրիմեան սրբազանի դիտողութեանց :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Անս այն կտորը՝ յորում Վերաքննիչ յանձնաժողովը կարեւորութիւն չէ տուած . տեղեկագրին 10ր. էջին մէջ է այն նամակը՝ զոր Խրիմեան Սրբազան գրած է Յանձնաժողովին 1875 յունիս 15 թուականաւ : ( Ամբողջ շահեւէ կորուլէ էրէ - ) Անս Խրիմեան սրբազան իւր նամակին մէջ կը պահանջէ որ իւր խնդիրն անմիջապէս Ազգային ժողովին ներկայացուի իբր ստիպողական . բայց Յանձնաժողովն ստիպողական չգատելով չէ ներկայացուցած . Յանձնաժողովին պարտքն էր ներկայացնել զայն Ազգային ժողովին , իսկ անոր կարեւորութիւն կամ ստիպողականութիւն ունենալը ժողովին կ'իյնար զիտնալ եւ որոշել : Հոս պէտք է համառօտիւ բացատրեմ թէ ինչ էր Խրիմեան սրբազանի առաջարկութիւնը :

Յանձնաժողովն իւր տեղեկագրին 23ր. էջին մէջ կըսէ . « Այսպէս՝ Տեսուչ ժողովոյ անօրէնութիւնը կը տեսնուի որ դիտուած եւ առաջարկուած է նաեւ Ս. Պատրիարքէն . Կեղր . « Քաղ . ժողովէն եւ Վանայ Քաղ . ժողովէն եւ « Առաջնորդական Տեղապահէն , թէ եւ իրարմէ « աւելի կամ պակաս տարբերութեամբ ու « բացատրութեամբ » :



Պէտք է դիտարկել թէ Խրիմեան սրբազանին առաջարկութիւնը բարոյութիւն տարբեր է Վերաքննիչ յանձնաժողովին առաջարկած Տեսուչ ժողովի մը կազմութենէն, թէ եւ յանձնաժողովը կ'ըսէ թէ Խրիմեան Սրբազանէն ալ դիտուած եւ առաջարկուած է այն. Խրիմեան սրբազան չէ ըսած թէ Վարչութեան չորս խորհուրդները միացուցէք եւ մէկ Տեսուչ ժողով մը կազմեցէք. այլ ըսած է թէ հիմակուան կրօնական եւ Քաղ. ժողովները բաւական չեն թէ տեղական եւ թէ գաւառական գործերը միանգամայն կարգադրելու, ուստի եւ պէտք է տեղական եւ գաւառական գործերն իսպառ իրարմէ բաժնել առանձին մասնաժողովներու յանձնելով, ինչպէս որ ասկէ առաջ ինք իր օրովը տեսած էր ասոր հարկը եւ դործադրած. վասն զի գաւառական գործոց մասնաժողով մը կազմած էր, որ նոյն ժամանակի Քաղ. ժողովոյ բերք մեծապէս թեթեւցուց. . .

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Միթէ մշտնջենաւոր էր այդ մասնաժողովը :

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՅ.— Ես չեմ ըսեր թէ մըշտնջենաւոր կամ մնայուն էր. այլ անոր դո՞ւրստութեան կարեւորութիւնը ճանչցուած էր, որուն տեսողութեան միջոցին Քաղ. ժողովոյ վրայէն մեծ բեռ մը առնուած եղաւ :

Խրիմեան սրբազանին բուն գրած նամակը բաւական երկար է. ուստի անոր բովանդակութիւնը միայն կը յիշեցնեմ, զոր Յանձնաժողովն իւր տեղեկագրին 37. երեսին մէջ երկու մասով ամփոփած է, եւ ահաւաստիկ. ( յիշած է՝ վանդակներու մասին յարցումներէն ետեւ ) ասոր մէջ անուններու տարբերութիւն կայ, անունները ճիշդ չգրած կրնայ ըլլալ, բայց սանունին վրայ չէ խնդիրը, Աւելորդ է իմ կողմէս բառ մը յաւելցնել ցուցնելու համար թէ Խրիմեան սրբազանի այս դիտողութեան մէջ ինչ աստիճան հեռատեսութեան եւ իմաստութեան ոգի կայ. եւ իրաւցնէ երբ ազգ մը կ'զգայ իրաւանց եւ պարտուց ճանաչումը, կը շատնան գործերը, եւ ինչ որ անկէ առաջ մտնէին մէջ էին՝ երեւան կ'երևնն եւ լոյս կը տեսնեն. Ահա դարձեալ նոյն բովանդակութեան երկրորդ մասն ալ պիտի կարդամ, որուն մէջ Խրիմեան Սրբազանին առաջարկութիւնը պարզաբանուած է գրեթէ : ( Յիշած էրէ՛րդ մըը կ'ըրէ՛ն ետեւ ) Հոս մասնաւոր խնդիրներն ընդհանուր խնդիր-

ներու հետ շփոթուած ըլլալը վրիպակ մը համարելով, տեղական եւ գաւառական խնդրոց իսպառ իրարմէ անջատուիլը կ'առաջարկէ եւ պէտք եղած բացատրութիւնները կը շարայարէ : Այս առթիւ դարձեալ կըստիպուիմ հոս կրկնել թէ Վերաքննիչ յանձնաժողովոյ պարտքն էր այս առաջարկութիւնը ներկայացնել այն ատեն Ազգային ժողովին, եւ չներկայացուց :

Յանձնաժողովոյ տեղեկագրին 147. էջէն ըսկըսեալ քանի մը թուղթ գրուած են գաւառներէն կ'կած զանազան դիտողութիւններ, անոնց մէջ ալ հասուն եւ օգտակար կէտեր կան զորս Յանձնաժողովն երբէք ուշադրութեան չէ առած : Օրինակի համար՝ Վանայ Գաւառական Վարչութեան կողմէն եկած դիտողութեանց մէջ այնպիսի կէտեր կան, որոնք բաւական կարեւորութիւն ունին, եւ զորս արժան կը համարիմ հոս ի մէջ բերել, որք են .

1. Կ. Պօլսոյ զատ գաւառ մ'ըլլայ :
2. Վարդապետներն ալ Պատրիարքական ընտրելի ըլլան :
3. Իրարու մօտակայ եւ սակաւ կարողութեան տէր վանորայք՝ միացեալ վանք կազմելով ի միասին գործադրեն նպատակին :
4. Կեդրոնական Վարչութիւնը Գաւառական Վարչութեանց միջոցաւ կատարէ իւր հրահրութիւնը վանօրէից վրայ :
5. Աղթամարայ կաթողիկոսութիւնը զատ գաւառ մը կազմուի իւր ընդարձակ վիճակներովը :

Ասոնց պէս կան շատ մը կէտեր ալ, զորս ամենը յիշատակել երկար կ'ըլլայ. միայն սն կ'ուզեմ հասկըցնել որ երբ Յանձնաժողովը մէկ կողմէ գաւառներէն դիտողութիւններ պահանջած է, հարկաւ անոնց փորձառութենէն օգուտ քաղելու նպատակաւ, միւս կողմէ այն դիտողութիւններն ալ՝ որ խիտ քիչ տեղերէ եկած են, բնաւ նկատողութեան չէ առած : Ասկէ սն միայն կը հետեւի որ դիտողութիւններն չգրկողները կամ աւելի պարզն ըսեմ՝ Վարչութեան պատուէրը չկատարողները բան մը վատկած կ'ըլլան ըսելով թէ դրկողներն ինչ շահեցան. ասկէ ալ կը հետեւի որ Վարչութիւնն իր յարգը կը կորսնցնէ եւ իր պատուէրներն անգործադրելի կը մնան, երբոր զանոնք կատարողները կը տեսնեն որ բան մը չեն շահիր :

Գարձեալ՝ Յանձնաժողովոյ տեղեկագրին 197. էջին մէջ, Ակոսայ Գաւառ. Ընդհ. ժողովէն

եկած դիտողութեանց բովանդակութիւնը զբռնուած է, յորում նոյն ընդհանուր ժողովը կը դիտէ թէ գաւառական Վարչութեանց պաշտօններն ամփոփել պէտք է : Այս ալ շատ կարեւոր կէտ մ'է, զոր Յանձնաժողովը բնաւին ուշադրութեան չէ առած : Մեք լաւ դիտենք որ՝ թողունք հեռաւոր գաւառները, նոյն իսկ Կ. Պօլսոյ մօտ գտնուած վիճակներուն մէջ Քաղաքական ժողովները միանգամայն Ուսումնական խորհրդոյ պաշտօնն ալ կը վարեն. իսկ հեռաւորներն աւելի դժուարութիւն ունին, եւ այս դժուարութիւնը յարուցանողն ո՞չ թէ գաւառներն, այլ նոյն ինքն ազգային Սահմանադրութիւնն է, որ գաւառական վարչութիւններն ալ Կ. Պօլսոյ Վարչութեան վրայ ձեւեր յարմարեցուցեր է. ինչ որ հոս կայ, գաւառներն ալ ըլլալու հարկ դրեր է. ասանկ սահմանադրութիւն մը չիսել շատ դիւրին է. բայց պէտք է դիտնալ որ ուրիշ սահմանադրական ազգաց մէջ ասանկ չէ. գաւառական վարչութեան ժողովոց թուոյն հաւասար չկրնար եւ պէտք չէ ըլլալ. ասիկա մեծ թերութիւն մ'է որ միայն մեր Սահմանադրութեան մէջ կայ, եւ Վերաքննիչ յանձնաժողովն այս կէտը նկատողութեան առած չէ, գոնէ Ակոսայ Գաւառ. ժողովին ըրած խելացի դիտողութիւնն ալ բանի տեղ դրած չէ : Նոյն Գաւառական ժողովն իւր դիտողութեանց կարգին մէջ նաեւ կը դիտէ որ « պատժական եւ վարձատրական օրէնքներ հաստատուին » : Այս կէտն ալ նկատողութեան արժանի է. ամենա ալ կ'զգանք որ մեր Վարչութիւնն անուանական է, իւր որոշումները շատ անգամ չեն յարգուիր, վասն զի պատժական դրութիւն չունի : Վերաքննիչ յանձնաժողովը պարտաւոր էր այս կէտին վրայ ալ խորհրդածել եւ կարծիք մը բերել ժողովին, զոր չէ ըրած : Շատ անգամ մեք մեծ անիրաւութիւն մը կ'ընենք Վարչութեան վրայ յարձակելով եւ այս ինչ կամ այն ինչ բանը պէտք է ընել ըսելով. բայց մեք մեզի կը խոստովանինք ալ թէ Վարչութիւնը չունի այն գորութիւնն ու միջոցն, որով կարենայ ընել ինչ որ իրմէ կը պահանջենք : Ասիկա խորին ուշադրութեան նիւթ մ'է, որուն վրայ թէեւ կ'ուզեմ մանրամասն խօսիլ, բայց զանց կ'ընեմ առ այժմ խնդրէն չչեղելու համար :

Նոյնպէս՝ Ակոսայ Գաւառ. ժողովը կը դիտէ թէ՛ ինչ ըսել է Սահմանադրութեան հիմնական սկզբունքն անփոփոխելի է, եւ այլն : Այս դիտողութիւնն ալ իրաւացի է, որոյ տեղի տուողը դարձեալ Սահմանադրութիւնն է. վասն զի հիմնական սկզբունք ըսելով բան մը գրուած է Սահմանադրութեան ճակատը. ամեն մարդ կը կարծէ թէ այն նօտր գրերով գրուածն է Սահմանադրութեան սկզբունքը. բայց այնպէս չէ. Սահմանադրութեան մէջ գնելու էր հիմնական սկզբունքը եւ ոչ թէ ճակատը :

Այս միջոցին Ատենապետ պէյն ընդմիջելով զեկոյց ատենարան էֆէնտիին թէ ատենանի փակման ժամը հասած է :

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՅ.— Իրաւ է որ երկար խօսիլն ինձ մեծ զուարճութիւն մը չէ, նոյնպէս է նաեւ երեսփոխան էֆէնտիներուն ունկընդորութեանը համար. սակայն ինչ ընեմ, խընդիրն այնպէս կը պահանջէ, եւ ստիպուած եմ խօսքս ամբողջացնել : Եւ որովհետեւ ատենանը փակուելու ժամն եկած է, ուստի կը թողում խօսքիս թելը միւս նստին մէջ շարունակելու պայմանաւ :

Ատենապետ պէյ ծանոյց թէ Տ. Մատթէոս Վ. եւ Վաղարոսեան Ք. Ռուսինեան եւ Շահպաղեան էֆէնտիները խօսք ունին յաջորդ նիստին այս խնդրոյն վրայ :

Ատենապետ պէյն առաջարկեց որ ժողովը յաջորդ նստին Օրակարգն որոշէ. եւ միաձայնութեամբ ընդունուեցաւ որ ներկայ նստին Օրակարգն անփոփոխ պահուի. միայն թէ ծանուցուի Օրակարգին մէջ գտնուած խնդրոց ըզբազող նախաքննիչ դիւաններուն որ իրենց յանձնուած խնդրոց տեղեկագրերը յաջորդ նստին հասցնեն :

Հետեւապէս ժողովն ՈՐՈՇԵՑ յաջորդ նիստը 15 օրէն գումարել ըստ յետագայ Օրակարգի :


1. Ծրագիր ազգային տրոց :
2. Կալուածոց դիւանի տեղեկագիրը ազգային վանօրէից համարառութեանը վերաբերեալ :
3. Փոփոխելի տրամադրութիւնք Սահմանադրութեան. — Վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագիրը :

Ատենան փակուեցաւ ժամը 10 ին :

ԱՏԵՆԱՊԵՏ Ս. Գ. Գ. ՓԱՍՏՁԱՆՅ ՍՏԵՆԱՊԵՏ ՕՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԱՆ









ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

~~~~~

ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

|                  |       |              |          |
|------------------|-------|--------------|----------|
| 1. Տ. Խորէն      | Եպիսկ | Նար-պէյ      | ԱՏԵՆԱԳԵՏ |
| 2. Տ. Կարապետ    | Վ.    | Սերոբեան     |          |
| 3. Տ. Յովնանէս   | »     | Փափաղեան     |          |
| 4. Տ. Խորէն      | »     | Կիրոյեան     | ԱՏԵՆԱԳԵՏ |
| 5. Տ. Ներսէս     | »     | Ասլանեան     |          |
| 6. Տ. Գէորգ      | »     | Գերձակեան    |          |
| 7. Տ. Ամբրոսիոս  | »     | Իսկէնտէրեան  |          |
| 8. Տ. Զաքարիա    | »     | Զիւմրիւթեան  |          |
| 9. Տ. Երեմիա     | Ք.    | Խասգիւղի     |          |
| 10. Տ. Արիստակէս | »     | Մամբրէեան    |          |
| 11. Տ. Գրիգոր    | »     | Աճէմեան      |          |
| 12. Տ. Գրիգոր    | »     | Արամեան      |          |
| 13. Տ. Սուքիաս   | »     | Ստեփաննոսեան |          |
| 14. Տ. Վրդանէս   | »     | Միջագիւղի    |          |

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

|              |              |        |          |
|--------------|--------------|--------|----------|
| 1. Սիմոն     | Մաքսուտեան   | պէյ    | ԱՏԵՆԱԳԵՏ |
| 2. Յակոբ     | Կոստանդ      | էֆէնտի |          |
| 3. Միքայէլ   | Մամիկոնեան   | »      | ԱՏԵՆԱԳԵՏ |
| 4. Սարգիս    | Աբրահամեան   | »      |          |
| 5. Կարապետ   | Փափաղեան     | »      |          |
| 6. Յարութիւն | Գափամաճեան   | »      |          |
| 7. Խաչիկ     | Ալեանաքեան   | »      |          |
| 8. Մկրտիչ    | Էսաեան       | »      |          |
| 9. Սիմոն     | Նորատունկեան | »      |          |
| 10. Սիմոն    | Միքայէլեան   | »      |          |
| 11. Սարգիս   | Արապեան      | »      |          |
| 12. Ստեփան   | Ինդիրեան     | »      |          |
| 13. Ասափա    | Իկիտպաչեան   | »      |          |
| 14. Աբրահամ  | Հարենց       | »      |          |



ՄԻՋԻՆԻՍԿ ԵՐԵՎԱՆ

ՄԱՐԿԵ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ

|       |               |       |            |
|-------|---------------|-------|------------|
| ՄԱՐԿԵ | Գրք-քեր       | Գրքեր | 1. Յ. Գրք  |
|       | Սրբագրություն | Բ     | 2. Յ. Գրք  |
|       | Գրքեր         | Գ     | 3. Յ. Գրք  |
| ՄԱՐԿԵ | Գրքեր         | Գ     | 4. Յ. Գրք  |
|       | Սրբագրություն | Գ     | 5. Յ. Գրք  |
|       | Գրքեր         | Գ     | 6. Յ. Գրք  |
|       | Սրբագրություն | Գ     | 7. Յ. Գրք  |
|       | Գրքեր         | Գ     | 8. Յ. Գրք  |
|       | Սրբագրություն | Գ     | 9. Յ. Գրք  |
|       | Գրքեր         | Գ     | 10. Յ. Գրք |
|       | Սրբագրություն | Գ     | 11. Յ. Գրք |
|       | Գրքեր         | Գ     | 12. Յ. Գրք |
|       | Սրբագրություն | Գ     | 13. Յ. Գրք |
|       | Գրքեր         | Գ     | 14. Յ. Գրք |

ԳԻՆ 2 ՂՐՈՒԾ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՅԵԱՆ

|       |               |   |            |
|-------|---------------|---|------------|
| ՄԱՐԿԵ | Գրքեր         | Գ | 1. Յ. Գրք  |
|       | Սրբագրություն | Գ | 2. Յ. Գրք  |
|       | Գրքեր         | Գ | 3. Յ. Գրք  |
|       | Սրբագրություն | Գ | 4. Յ. Գրք  |
|       | Գրքեր         | Գ | 5. Յ. Գրք  |
|       | Սրբագրություն | Գ | 6. Յ. Գրք  |
|       | Գրքեր         | Գ | 7. Յ. Գրք  |
|       | Սրբագրություն | Գ | 8. Յ. Գրք  |
|       | Գրքեր         | Գ | 9. Յ. Գրք  |
|       | Սրբագրություն | Գ | 10. Յ. Գրք |
|       | Գրքեր         | Գ | 11. Յ. Գրք |
|       | Սրբագրություն | Գ | 12. Յ. Գրք |
|       | Գրքեր         | Գ | 13. Յ. Գրք |
|       | Սրբագրություն | Գ | 14. Յ. Գրք |

Կը ճախոշի ի Գիւսնւստան Պատրիարքարանի, և կը գտնուշի Եկեղեցեաց բանկայնէրը:

|               |   |            |
|---------------|---|------------|
| Գրքեր         | Գ | 1. Յ. Գրք  |
| Սրբագրություն | Գ | 2. Յ. Գրք  |
| Գրքեր         | Գ | 3. Յ. Գրք  |
| Սրբագրություն | Գ | 4. Յ. Գրք  |
| Գրքեր         | Գ | 5. Յ. Գրք  |
| Սրբագրություն | Գ | 6. Յ. Գրք  |
| Գրքեր         | Գ | 7. Յ. Գրք  |
| Սրբագրություն | Գ | 8. Յ. Գրք  |
| Գրքեր         | Գ | 9. Յ. Գրք  |
| Սրբագրություն | Գ | 10. Յ. Գրք |
| Գրքեր         | Գ | 11. Յ. Գրք |
| Սրբագրություն | Գ | 12. Յ. Գրք |
| Գրքեր         | Գ | 13. Յ. Գրք |
| Սրբագրություն | Գ | 14. Յ. Գրք |